

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինայի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-2 /համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

12.03.2015

Հայտատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինայի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-2 /համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Մադինայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

/ Ծածկագիր՝ 3.1-2 /

1. Առաջատար մասնագետը՝

ա/ քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է աշխատակազմի փաստաթղթաշրջանառությունը՝ կապված հարկերի, տուրքերի և վարձավճարների գանձման դինամիկայի հետ / մասնավորապես գույքահարկի, հողի հարկի վարձավճարները /, մուտքագրումը համակարգիչ,

բ/ կատարում է գրությունների, նամակների պատասխանների տպագրում-առաքում, օպերատորական ողջ աշխատանքները,

գ/ համակարգիչ է մուտքագրում համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցութային և ատեստավորման թեստերը և մյուս պաշտոնների թեստերը, հսկում է դրանց (փոփոխությունների հետ կապված գործընթացը և համայնքի ղեկավարի կողմից դրանց փոփոխության դեպքում փոփոխություն է կատարում համապատասխան ֆայլում),

դ/ իրականացնում է համայնքային ծառայության հետ կապված աշխատանքները (թափուր տեղերի համար դիմորդների գործերի ընդունում, մրցութային և ատեստավորման հանձնաժողովներին դրանց հանձնելը և այլն),

ե/ կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,

զ/ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,

է/ հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է իր անմիջական ղեկավարին,

ը/ իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ,

հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

թ/ իրականացնում է քաղաքացիների հերթագրում՝ քարտուղարի մոտ ընդունելության համար,

ժ/ քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին,

ի/ / քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան,

լ/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետը ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքները (և կրում է) իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ)

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

2) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթը կանցկացվի 2015 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 12-00, Մադինայի գյուղապետարանում

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

2) տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/, անձնագրի պատճենները՝ բնօրինակի հետ միասին

3) արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին

մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին մրցութային մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից 18.00 մինչև 2015 թվականի ապրիլի 20-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, գյուղապետարանում / Մադինայի/ և ՀՀ Քեղարքունիքի մարզ, ք. Գավառ, մարզպետարանում / Գրիգոր Լուսավորչի 36 կամ Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցույթների անցկացման վայրի, օրվա և ժամի հնարավոր փոփոխությունների մասին կհայտնվի լրացուցիչ՝ մրցույթից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Մադինայի գյուղապետարանի աշխատակազմ կամ ք. Գավառ, Քեղարքունիքի մարզպետարան:

Էլ. փոստ՝ S-khghatyan@mail.ru

Հայտարարված է՝ 12.03.2015

Վերջին ժամկետը՝ 23.03.2015

Պատասխանատու անձ՝ Մադինայի գյուղապետարանի աշխատակազմ

Հասցե՝ գյուղ Մադինա

Հասցե՝ ՀՀ Քեղարքունիքի մարզ, գ. Մադինա

Հեռ.՝ +374 262-6-19-90, +374 93-49-41-99

Էլ. փոստ՝ madina.gegharquniq@mta.gov.am

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ